



### 119. ԽԸՆԱԿԱՍ ՄԱՐԹԸ

Մին մարթ ա ինում, մինգյել մին կնեպյ։ Կնեպյը մեհետ խորագյ ա իփում, աղը քցում։ Խորագյը աղը յա ինում։ Մարթն ասում ա։—Մինգյել ես ըմ իփիլական։ Կնզանան հըրցնում ա, թա՝ աղը հիշքան ը՞ն քցում։ Կընեպյը կյիսկը տեմ ա անում, թա՝ չչքան։

Էքսի օրը մարթը խորագյ ա իփում, մին կյիսկ աղ քցում մաշը, էլլա աղը յա ինում։ Կնեպյը տրան թակում ա, տանան տիւն քցում։ Տա փախճում ա, քյինամ տըեսնում հըլցընեն տակընեն մին մարթ արտը վարած, սըերմը քցիլիս։ Պարյոր ա տամ, ասում։—Հըզզարը մին տըեռնաւ։ Էտ մարթը տրա լիրա կըզնըվում ա, ասում։—Շնն, շան տղա, պա էտ խոսկ ա՞, վըեր տու ըսըցեր, պա հըմընչեցերվո՞ւ, Տա թա՝ պա հինչ ա՞սըեմ։ Էտ սըերմը շադ տվողն ասում ա։—Կասընեն աստուծ բարնքյաթ տա, մինը հըզզար տըեռնաւ։ Տա թա՝ լավ, օրաս ետը իտի կասընեմ։

Հղը յա ինում, քյինամ, տըենում մին շենու որաղավ մին դաստան մարթիքյ լաց ինիլավ մըեռալ ըն տանում, վըեր թաղընեն։ Տա էտ լաց ինուղնըերեն մուտանում ա, ասում։—Աստուծ բարագյաթ տա, մինը հըզզար տըեռնաւ։ Էտ մարթիքյ էլ կըզնըվում ըն տրա լիրա, իրըսարանք տամ, թա՝ պա իտի վախտը իտի խոսկե կասընեն, վըեր տու ըսըցեր։ Տա թա՝ պա հինչ ասըե՞մ։ Տահանք թա՝ կասընեն, էտ ինի, էլ վըել ինի, աստուծ իտի պենը միշտ հեռու պահը ծըզանաւ։ Տա թա՝ լավ, օրաս ետը իտի կանըեմ։

Քյինամ ա տըեսնում մին տըեղ հըրսանըերյ ըն անում։ Ժուղ-

վուրթը հըվաբված, խմած, քըրփըրնընն քյուքացած, պար կլալիս  
վախտը տահանց մուտանում ա, ասում.—էտ ինի, վրել ինի, աս-  
տուծ իտի պենը հեռու պահը ծրզանաւ էտ մարթիթը փոնում ըն  
տրան մին լավ թակում, թա՝ շան քընծահար, պա իստի ուրիխու-  
թումընն վախտը իտի խոսկը կասըն՝, վրեր տու վըս ասում: էտ  
մարթը թա՝ պա հինչ ա՞սընմ: Տահանը ասում ըն.—Կըմուտանան,  
ասըն՝ շընընավուր ինի, աստուծ ծընզ միշտ ուրիխոթում տա,  
կասընն, ետնան էլ նի մննընն պար կյըվուղնըներնն նհընտ պար  
կլան: Տա թա՝ լավ, օրաս ետը իտի կանընմ:

Քյինամ ա տըսնում մին հլիվուր մարթ ճորընն պրժտուն  
ըմընոցավ պեռնած, ծմակընն մաշավը տանում ա, վրեր ծախըն,  
Մուտանում ա, ասում.—Եընընավուր ինի, աստուծ ծընզ միշտ  
ուրիխոթուն տա, ասում ա, բսկում նհընտն էլ պար կլալը: Տա  
վրեր ծընոքըները պիցըրցնում ա պար կյամ, էտ ճորընն խռնում  
ա, տամ ծմըկնըներնն, ըմընեթյը լոխ կուտրատում: էտ ճորուն  
տարը տրա յիրա կըզնընվում ա, ասում.—էտ պեն ա՝, պա վրեր  
տու ըրընը: Տա թա՝ հինչ ըրըն: էտ հլիվուրն ասում ա.—Տընե-  
նում լը՝, վրեր էշը խըռնըցըներ, տուվավ ծմըկնըներնն, ըմընեթյը  
լոխ կուտրատեց, ինձ շիրմու տակ քցից: Տա թա՝ պա հինչ ընի՞,  
էտ հլիվուրն ասում ա.—Կըմուտանան, պարյոր տան, ետնան էլ  
քյումագյ անընն, ճորընն նընզ տըզերան, շըմքնտան տոնս օնընն,  
պարի ճանապար ասընն, քյինան: Ասում ա.—Լա՛վ, օրաս ետը  
իտի կանընմ:

Քյինամ ա տըսնում մին օրիշ մարթ ծմական փադ շիլակած,  
տանում ա տոն: Փադը ծանդըր ա իննում: Մին տընզ փադը շիլա-  
կընն նստում ա, վրեր դինշանան: Մուտանում ա, ասում.—էտ ճո-  
րուն պեռնը հինչ ծանդը ա յե՛, քյումագյ անընմ, ըստընզաս տոնս  
օնընմ: էտ մարթը շելակը վրեր ա տինժում, զաթան մին փադ  
տոնս օնում, տրան էնքան թակում, ուրանան քյինըցնում, թողում  
ըտընզ փըւըփալի ընընիս, ինքյը փադը շիլակում, հզըն իննում:

